

# ՀՊՄՀ կրթության կառավարման ուսանողների մասնակցությունը

## «Կրթություն և կարիերա EXPO 2014»

### ցուցահանդեսին



Օրերս կայացած «Կրթություն և կարիերա EXPO 2014» խորագրով մասնագիտացված ցուցահանդեսում Մանկավարժական համալսարանի «Համալսարան-գործատու համագործակցության կենտրոն»-ի աջակցությամբ Կրթության կառավարում ամբիոնի ուսանողուհիները ներկայացրեցին «Mahatma» ծրագրի հիմնական նպատակները և

ձեռքբերումները:

Ուսանողուհիներ Ալինա Աղասյանը, Անետ Դիլանյանը, Ռոզա Նալբանդյանը և Ինգա Ստամբուլցյանն այցելուներին՝ մագիստրատուրայի ապագա դիմորդներին տրամադրեցին տեղեկատվություն ծրագրի առանձնահատկությունների, ընդունելության պահանջների և աշխատանքային հետագա հնարավորությունների վերաբերյալ:



Ուսանողները նշեցին, որ ձգտել են այցելուներին հնարավորինս մատչելի ներկայացնել ծրագիրը և պատասխանել նրանց

հուզող հարցերին:

«Կրթություն և կարիերա EXPO 2014» ցուցահանդեսն անցկացվել է ՀՀ Կրթության և գիտության նախարարության աջակցությամբ և նախարար Արմեն Աշոտյանի անմիջական մասնակցությամբ:

